

ՄԱՐՏ
21



ԿԿՈՒ

Մանկապատանեկան Թերթիկ

ՄԱՐՏ Գ - 2025
Թիւ - 11 -



Թիւր պատրաստեց՝
ՓԱԹԻՆ ԳԱՍԱԳԵԱՆ-ՎԱՐԴԱՊԵՏԵԱՆ
Նկարազարդեց՝
ՌԱՅՅԻՐ ՔԷՇԻՇԵԱՆ

21 Մարտը երախտագիտութեան եւ գնահատանքի արտայայտութեան օր մըն է:

«Մայրերու Օր»-ը գեղեցիկ ու բարի ամառային մըն է: Այսպէս, Մարտ ամսուան ընթացքին կը կազմակերպուին գանազան ձեռնարկներ, դասախօսութիւններ, ելոյթներ, որոնց ընթացքին կը գնահատուին մայրը, անոր նուիրումն ու անզուգական դերը՝ իր տան սիւները ամուր պահելու մնայուն ճիգին համար:

Այս բոլորը անոր համար են, որ մայրը ունի յատուկ եւ մեծ դեր աշխարհի բոլոր ժողովուրդներու կեանքին մէջ: Ան է, որ կ'ապահովէ ազգերու յարատեւումը, անոր շնորհիւ ընտանիքի անդամներ իրար կը կապուին, իրարմով կ'ամբողջանան:

Մարդկային զգացումներու մէջ մօր սերէն անելի զօրաւոր զգացում չկայ: Ան միակ անձն է, որ երբ կը նայի զաւակին աչքերուն կը հասկնայ անոր սրտի ցան ու ուրախութիւնը:

Մայրը իր կեանքի ամեն մէկ վայրկեանը մեզ խնամելով ու հոգ տանելով կ'անցնէ:

Մայրն է, որ կը սորվեցնէ տարբերել լաւը վատէն, ան է, որ կը սորվեցնէ սիրել, յարգել եւ բարի ըլլալ: Ինչքան ալ մեծնանք, միշտ ալ իրեն համար մենք փոքր կը մնանք:

Ազգային դէմքեր, քաղաքական հերոսներ, գիտնականներ եւ շատ-շատեր ընդհանրապէս իրենց մօր գուրգուրանքով եւ քաջալերանքով յառաջացած են, «տեղ հասած» են ու լաւագոյնս յայտնաբերած:

Կարելի չէ մոռնալ եւ անտեսել իրենց գուրգուրան ու հոգատարութիւնը, որոնք լեցուցած են մեր օրերը:

Իսկ իբրեւ հայեր մեզի համար: Հայ մայրը միշտ եղած է հայուն տոկոսութեան յատկանիշը: Դարերու ընթացքին, մշակութի մեր հանճարները, իրենց բանաստեղծութիւններով, յօդուածներով եւ երգերով միշտ յիշած, պատուած եւ մեծարած են իրենց մայրերը:

Իբրեւ հնագոյն ժողովուրդ եւ ազգ, մենք՝ հայերս, մեծ յարգանք ցուցաբերած ենք մեր մայրերուն, եւ կը կարծենք, որ աշխարհի մայրերուն մէջ, հայ մայրը ամենէն տառապածն է իր ընտանիքին, հարազատներուն եւ հայրենիքին համար:



Վկայ՝ երկար դարերու մեր պատմութիւնը: Մեր մայրերուն մէջ մենք գտած ենք գուրգուրան, սեր, անսահման բարութիւն, մեծ նուիրում եւ հոգածութիւն ու աստուածային բոլոր սրբազան արժանիքները:

Հայ մայրը, իր ընտանիքին կողքին միշտ կանգնած է իբրեւ ամուր վահան եւ պատնէշ ամբողջ իր կեանքի ընթացքին:

Հայ մայրն է, որ պաշտպանած է հայրենի հողը: Նոյն ինքն է, որ իր զաւակներուն քաջալերած, յոյս եւ կորով ներշնչած է:

Տակաւին հայ մայրն է, որ Տեր Զօրի անապատի անապատներուն վրայ իր երեխային «այբ-բեն-գիմ»-ը սորվեցուցած է:

Այլ խօսքով՝ հայ մայրը եղած է հայակերտման առաջին ուսուցիչը իր հայ մանուկին: Ան է որ իր մէջ կը պարփակէ կեանքի ամենէն գեղեցիկ զգացումները ու զանոնք կը փոխանցէ իր զաւակներուն: Հայ մայրն է, որ իբրեւ յանձնառու իր սրբազան դերին, իր գիտակցութեամբ, համբերութեամբ, սիրով, գուրգուրանքով, զոհաբերութեամբ եւ խրատներով մեծցուցած է եւ տակաւին կը շարունակէ մեծցնել իր զաւակները:

Անոր համար մեր մօտ լաւին, բարիին, հաւատարմութեան եւ քաջութեան օրինակելի խորհրդանիշն է՝ ան:

Հայ մայրն է իր զաւակներուն հոգիին մէջ հայ ինքնութիւն կերտողը, դաստիարակողը, փայլուն ապագայի ճամբան ցոյց տուողը:

Կը մաղթենք ամենայն բարիք, հոգեկան արիւթիւն եւ կորով շարունակելու համար իր սրբազան առաքելութիւնը, յանուն հայ ընտանիքին, հայրենիքին եւ ազգին:

Մեր կարգին, այս աղուոր եւ գեղեցիկ տօնին, առ ի գնահատանք եւ երախտագիտութիւն, ի սրտէ բխող մեր որդիական սերն ու յարգանքը կ'ուղղենք բոլոր մայրերուն:


Շնորհաւոր ըլլայ Մայրերու Օրը: Յարգանք ու պատիւ մեր բոլոր մայրերուն:

Ձեռային




21 Մարտը մեր շատ սիրելի մայրիկներուն տօնն է: Եկէ՛ք ուրախացնենք զիրենք, պզտիկ եւ յիշատակելի ձեռայինով մը:

Նախ եթէ մանչ ես տղու նկարը ընտրե՛ս եւ ներկե՛ս նախասիրած գոյներովդ, իսկ եթէ աղջիկ ես ուրեմն՝ աղջկայ նկարը, ապա նկարին վրայ նշուած կետիկներուն վրայէն շէղրով կամաց մը անցիր, ետքը թելերը կտրած տեղէն ծալլե՛ս եւ ներկած սրտիկովդ խեժով իրար միացուր:

Պատկերը այսպէս պետք է ըլլայ:




Մատիտով նկարներուն վրայէն անցի՛ր, պայմանաւ որ շարքը ըլլայ պզտիկէն մեծ:



2

Տուփիկներէն ճիշդը ընտրելով փորձե՛ր ամբողջացնել պատկերը:



ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայ նշանավոր բանաստեղծներ անթիւ ու անհամար ստեղծագործութիւններ գրած են մեր թանկագին մայրիկներուն: Եկէ՛ք ծանօթանալ հայ մեծանուն բանաստեղծներու գործերէն երկուքին, որոնք սուիրուած են մայրիկներուն:

Մօր Ձեռքերը

Այս ձեռքերը մօ՛ր ձեռքերը,
Հինաւուրց ու նո՛ր ձեռքերը...
Ինչե՛ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...
Պսակուելիս ո՛նց են պարել այս ձեռքերը՝
Ի՛նչ նազանքով,
Երազանքով:
Ինչե՛ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...
Լոյսը մինչեւ լոյս չեն մարել այս ձեռքերը,
Առաջնեկն է երբ որ ծնուել,
Նրա արդար կաթով սնուել:
Ինչե՛ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...
Չրկանք կրել, հոգս են տարել այս ձեռքերը
Ծով լռութեա՛մբ,
Համբերութեա՛մբ:

Պարոյր Սեւակ

Մայրս

Մեր յոյսի դուռն է մայրս,
Մեր տան մատուռն է մայրս,
Մեր օրօրոցն է մայրս,
Մեր տան ամրոցն է մայրս
Մեր հերն ու մերն է մայրս,
Մեր ճորտն ու տէրն է մայրս,
Մեր տան անտունն է մայրս,
Մեր արծուաբունն է մայրս,
Մեր տան ծառան է մայրս,
Մեր տան արքան է մայրս,
Մեր տան անճարն է մայրս,
Մեր դէլ ու ճարն է մայրս,
Մեր տան աղբիւրն է մայրս,
Մեր ծարաւ քոյրն է մայրս,
Մեր տան անքունն է մայրս,
Մեր անուշ քունն է մայրս,
Մեր տան ճրագն է մայրս,
Մեր արեգակն է մայրս:
Մայրս, մեր հացն է մայրս,
Մեր տան աստուածն է մայրս:

Յովհաննէս Ծիրազ



ԻՆՉՊԷՍ ԳՐԵԼ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ ՄԱՅՐԻԿԻՆ ՄԱՍԻՆ

Հետաքրքրական է երբ պրպտենք, թե աշխարհի վրայ ո՞ր բառը ամենի ճանչցուած եւ օգտագործուած է... վստահ Նոյնը մտածեցիք չէ՞: Ես համոզուած եմ, որ այդ բառը կ'ըլլար «մայրիկ»-ը: Մենք այսօր պետք է փորձենք բանաստեղծութիւն մը գրել, աշխարհի մէջ մեզի համար ամենէն թանկ էակին՝ մայրիկին մասին:

Այո՛, այո՛, բանաստեղծութիւն պիտի գրենք միասին: Ճիշդ հիմա վերցո՛ւր սրբիչդ եւ ջնջէ՛ բոլոր դժգոհութիւններդ, կասկածներդ եւ «չեմ կրնար»-ներդ, միայն թե գգոյշ, ժպիտդ չջնջես:

Իրականութեան մէջ ոչ մէկ դժուար բան կայ: Կարելորդ փափաքիս ու համոզուիս: Ուրեմն մէկ կողմ դի՛ր սրբիչդ եւ վերցո՛ւր թուղթ մը ու գրիչ մը. բանաստեղծութիւն գրելու համար. ահա՛ այս ամենը անհրաժեշտ է: Իսկ հիմա ուշադիր հետեւէ՛ այս խորհուրդներուն.

- Բանաստեղծութեան չափը կրնաս դուն ինքդ որոշել: Նոյնիսկ կրնայ ըլլալ քառատող: Բայց յիշէ՛, բանաստեղծութեան ամենակարեւոր խախապայմանը. այն է, որ պետք է յանգեր ունենայ: Համեմատենք՝

Գեղեցիկ ու բարի ես,

Հեքիաթային փերի ես:

Վերոյիշեալ տողերը յանգաւորուած տողեր են, իսկ ահա վարի բաժնի տողերը Նոյն բառերն են, բայց առանց յանգի:

Գեղեցիկ ու բարի ես,

Հեքիաթային իմ փերի:

Ըստ քեզի, որ մէկը ամենի գեղեցիկ է: Վստահ, որ յանգաւորուած տարբերակը, չէ՞:

- Բանաստեղծութեանդ մէջ անպայման պետք է մայրիկը եւ յատկապէս քու մայրիկը բնութագրող բառեր ըլլան, արտայայտութիւններ եւ երբեմն լատին չափազանցուած գովասանք՝ սիրելի՛ մայրիկ, ինծի համար ողջ աշխարհ մըն ես, գեղեցկուհի եւ այլն:

- Այնտեղ պետք է ըլլան շնորհակալական խօսքեր: Կրնաս գրել ընդամենը «շնորհակալ եմ, որ կաս»:

- Շա՛տ համեմատութիւններ ըրէ՛: Օրինակ՝ համեմատէ՛ գինք գարնան, արեւին, գեղեցիկ ծաղիկներուն հետ:

- Նկարագրէ՛ մայրիկիդ բնաւորութիւնը, դարձեալ կրնաս համեմատութիւններ ընել «բարութիւնդ ծովու պէս անսահման է»:

- Նկարագրէ՛, թե դուն ինչքա՛ն շատ կը սիրես գինք եւ թե ան ինչքա՛ն կարելոր է քեզի համար:

- Կրնաս լատին գրել այն մասին, թե երբ մեծնաս, ինչեր պիտի ընես մայրիկիդ համար:

- Ոչ մէկ պարագայի կեղծ խօսքեր չգրե՛ս, ընդհակառակը, գրէ՛ քու բառապաշարովդ, քու տաքուկ ու անկեղծ խօսքերովդ:

Յիշէ՛ լատին, որ բանաստեղծութիւնդ պայման չէ որ արագ: Կրնայ ըլլալ քանի մը տող գրելու համար ամբողջ մէկ ժամ տեւէ: Այնպէս որ այսպիսի դեպքի մը դիմաց չյուսահատիս:

Նշանաւոր ու սիրուած բանաստեղծներն ալ երկար ժամանակ տրամադրած են գեղեցիկ բանաստեղծութիւն մը գրելու համար: Կարելորդ այն է, որ փափաք ունենաս.

համբերութիւնը ի՞նչ է, որ չունենանք...

